ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

N 423 -Ա

ք.Արտաշատ

23 դեկտեմբերի 2024թ.

ԹՈՐԳՈՄ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՈՍԿԵՏԱՓԻ ՍԱՐԳԻՍ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԱՍԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի, 31-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի մարտի 2-ի «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության վարչատնտեսական մասի համակարգողի նշանակման կարգը հաստատելու մասին» թիվ 259-Ն որոշմամբ հաստատված կարգի 11-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետի մոտ 2024 թվականի դեկտեմբերի 20-ին Թորգոմ Պետրոսյանի հետ անցկացրած հարցազրույցը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Թորգոմ Պետրոսյանին 2024 թվականի դեկտեմբերի 23-ից նշանակել «Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Ոսկետափի Սարգիս Հովհաննիսյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգող՝ նրա հետ կնքելով աշխատանքային պայմանագիր հինգ տարի ժամկետով:

2. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետի աշխատակազմի կրթության,

մշակույթի և սպորտի վարչությանը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպել և անցկացնել «Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Ոսկետափի Սարգիս Հովհաննիսյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի հանձնման – ընդունման աշխատանքները և կազմել համապատասխան արձանագրություն:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Восстановимая подпись

X

ՍԵԴՐԱԿ ԹԵՎՈՆՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: TEVONYAN SEDRAK 2602900826 **Ս. ԹԵՎՈՆՅԱՆ**